



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ  
**ՀՐԱՄԱՆ**

No 84 -Ն

«03» հուլիսի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 3-ՐԴ, 6-ՐԴ, 8-ՐԴ ԵՎ  
11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
**ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ  
հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ֆիզկուլտուրա» առարկայի 3-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարանների ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝

**Ժ. ԱՆԴՐԵԱՅԱՆ**

7/3/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169



Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի հուլիսի 3-ի

N 84-Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 3-ՐԴ, 6-ՐԴ, 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ  
«ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ  
3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԹԵՄԱ 1
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
Հիմնական նպատակը
1. Ձևավորել պատկերացումներ. 1) շարժողական ռեժիմի, 2) դպրոցականի շաբաթական բեռնվածության ծավալի վերաբերյալ: 2. Հաղորդել գիտելիքներ. 1) ֆիզիկական վարժություններով պարապելու կարևորության և ներդաշնակ զարգացման գործում դրանց ազդեցության, 2) տարբեր ֆիզիկական վարժությունների ժամանակ շնչառության ճիշտ զուգակցման վերաբերյալ: 3. Տեղեկություններ հաղորդել ժամանակակից օլիմպիական խաղերի վերաբերյալ:
Վերջնարդյունքներ
1. Կարևորի ֆիզիկական վարժությունների դերն ու նշանակությունը առողջության ամրապնդման գործում: 2. Ինքնուրույն կախարի առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն:

3. Պահպանի կոփման կանոնները և անձնական հիգիենան:

4. Գիտի ժամանակակից օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ տեղեկություններ:

### Բովանդակություն

1. Շարժողական ռեժիմ:

2. Ֆիզիկական վարժությունների ազդեցությունն առողջության ամրապնդման, կեցվածքի ձևավորման, մտավոր և ֆիզիկական աշխատունակության վրա:

3. Շնչառությունը տարբեր ֆիզիկական վարժություններ կատարելիս:

4. Ժամանակակից օլիմպիական խաղեր:

### Առաջարկվող գործունեության ձևեր

1. Ծնողների օգնությամբ համացանցից և գրականությունից օգտվելով՝ ուսումնասիրում և ներկայացնում են ժամանակակից օլիմպիական խաղերը, ֆիզիկական վարժությունների ազդեցությունը առողջության ամրապնդման, կեցվածքի ձևավորման, մտավոր և ֆիզիկական աշխատունակության վրա թեմաները:

2. Դասարանում ինտերակտիվ խաղերի միջոցով կազմում են իրենց տարբերակը մարդու շարժողական ռեժիմի և տարբեր ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ շնչառության կարևորության մասին:

### Խաչվող հասկացություններ

#### 1. Ժամանակ և տարածություն

1) Սովորողներն ուսումնասիրում են մարզական ոլորտի տարբեր մարդկանց պատմությունները, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով մարզումների դերը տարբեր ժամանակների նշանավոր մարդկանց կյանքում:

#### 2. Անհատական և մշակութային արժեհամակարգ

1) Ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ:

2) Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:

#### 3. Չարգացում

1) Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և

	խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>1. Հայոց լեզու:</b> Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:</p> <p><b>2. Հայոց պատմություն:</b> Համաշխարհային պատմություն: Պատմական ակնարկներ:</p> <p><b>3. Ինֆորմատիկա:</b> Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր:</p>	
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>	
S3, S4, S5, S6, S7, S8, S10, S11, S33, S34	
<b>ԹԵՄԱ 2</b>	
<b>ԱԹԼԵՏԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ /ՎԱՉՔԵՐ: ՑԱՏԿԵՐ: ՆԵՏՈՒՄՆԵՐ/</b>	
<b>Հիմնական նպատակը</b>	
<p>1. Ամրապնդել վազքի, ցատկերի և նետումների հմտությունները:</p> <p>2. Մշակել արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ուժ, կոորդինացիա:</p> <p>3. Նպաստել.</p> <p>1) համարձակության, ինքնավստահության, կամքի ուժի դաստիարակման,</p> <p>2) առողջության ամրապնդման և ֆիզիկական ներդաշնակ զարգացման գործում:</p>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<p>1. Արագացումով <i>վազի 30մ</i> ցուցաբերելով բարձր արդյունքներ:</p> <p>2. <i>Հեռացատկի</i> և <i>բարձրացատկի</i> թափավազքով, թենիսի գնդակը <i>նետի</i> նշանակետին և հեռավորության, ցուցաբերելով բարձր արդյունքներ:</p>	
<b>Բովանդակություն</b>	
<p>1. <b>Վազքեր`</b> բարձր մեկնարկից վազք, վազք արագացումով մինչև 30 մ, վազք` հաղթահարելով արգելքները: Վազք մինչև 4 րոպե:</p> <p>2. <b>Ցատկեր`</b> ցատկեր ցատկապարանով `զույգ, աջ և ձախ ոտքերով տեղում և տեղաշարժվելով: Հեռացատկ տեղից: Հեռացատկ 4-6 քայլ թափավազքով: Բարձրացատկ 4-6 քայլ թափավազքով:</p> <p>3. <b>Նետումներ`</b> թենիսի գնդակի նետում նշանակետին (2 x 2 մ թիրախ) 4-5 մ հեռավորությունից: Թենիսի գնդակի նետում հեռավորություն:</p>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող հասկացություններ</b>

Առանց գործիքների և դրանց կիրառմամբ աթլետիկական վարժությունների կատարում:

**1.Օրինաչափություն**

- 1) Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ քայլքի, վազքի կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ:
- 2) Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:

**2.Համակարգ և մոդել**

- 1) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Աթլետիկա» մարզածևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:
- 2) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:

**3.Անհատ և հարաբերություններ**

- 1) Սովորողներն ուսումնասիրում են.
  - ա. մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,
  - բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:

**Միջառարկայական կապեր**

**1.Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:

- 2.Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր:
- 3.Մաթեմատիկա:** Հաշվողական կարողություններ:
- 4.Պար:Երաժշտություն:** Երաժշտառիթմական շարժումներ:
- 5.Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ**

S3, S4, S5, S6, S7, S8, S10, S11, S33, S34

**ԹԵՄԱ 3**

**ՄԱՐՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿԱԽԵՐ ԵՎ ՀԵՆՈՒՄՆԵՐ: ՀԵՆԱՑԱՏԿԵՐ: ԱԿՐՈՔԱՏԻԿ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՄԱԳԼՑՈՒՄՆԵՐ: ՌԻԹՄԻԿ - ՄԱՐՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ/**

**Հիմնական նպատակը**

1. Ուսուցանել շարային, ընդհանուր զարգացնող, մագլցման, հավասարակշռության պահպանման, ակրոբատիկ, ռիթմիկ-մարմնամարզական, պարային վարժությունների, կախերի և հենումների տեխնիկական ճիշտ կատարումը:
2. Ամրապնդել շարժումները համաձայնեցնելու, տարածության մեջ ճիշտ կողմնորոշվելու հմտությունները:
3. Նպաստել.
  - 1) ճկունության, արագաշարժության, հավասարակշռության մշակմանը,
  - 2) ուշադրության կենտրոնացման, շարժումների համակցման, ռիթմի զգացողության, կոորդինացիայի զարգացմանը:
4. Դաստիարակել համագործակցություն, ինքնավստահություն, կարգապահություն և դժվարությունները հաղթահարելու կամք:

**Վերջնարդյունքներ**

1. *Գիտակցի* ֆիզիկական վարժությունների համալիրների կատարման կարևորությունը օրգանիզմի հենաշարժողական համակարգի համար:
2. Ինքնուրույն *կատարի* մարմնամարզական շարային, ակրոբատիկական, պարային, ընդհանուր զարգացնող վարժությունները, կախերը և հենումները:

**Բովանդակություն**

1. **Շարային վարժություններ.**
  - 1) «ՇԱՐԿԻՐ», «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ», «Աջ (ձախ)-ՀԱՎՍԱՐ», «ԶԳԱՍՏ», «ԱԶԱՏ», «ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼ», «Մեկից երկու-ՀԱՇՎԻՐ», «Հերթով-ՀԱՇՎԻՐ», «Քայլով ՄԱՐՇ», «Լայն քայլ», «Արագ քայլ», «Դանդաղ քայլ» «Կանգ ԱՐ» հրահանգների կատարում,
  - 2) քայլով տեղաշարժեր. «Իմ ետևից-ՄԱՐՇ», «Անկյունագծով-ՄԱՐՇ», «Հակընթացով-ՄԱՐՇ», «Օձաձև-ՄԱՐՇ» հրահանգների կատարում,

- 3) բացազատում կից քայլերով. «Դեպի աջ (ձախ) կենտրոնից (աջից, ձախից)», այսքան քայլով (տարածած ձեռքերի չափով)-  
ԲԱՑԱՉԱՏՎԻՐ:
2. **Ընդհանուր զարգացնող վարժություններ.** մարզափայտերով, օղերով, գնդակներով, համալիր վարժություններ: Կեցվածքի ձևավորման վարժություններ:  
Շնչառական վարժություններ:
3. **Մազլցման վարժություններ`** մազլցում թեք տեղադրված մարզանստարանի վրայով ծնկած, հենում պառկած, փորի վրա պառկած դրոլթյամբ` ձեռքերով ձգվելով: Մազլցում մարզապատի վրայով, պարանամազլցում:
4. **Հավասարակշռության վարժություններ** մարզանստարանի վրա, քայք, կանգ մեկ և երկու ոտքերի վրա, դարձումներ և վարցատկ:
5. **Ակրոբատիկական վարժություններ`** գլուխկոնծի առաջ, թիկնականգ, մեջքի վրա պառկած դրոլթյունից ընդունել «կամուրջ» դրոլթյունը:
6. **Ռիթմիկ մարմնամարզության վարժություններ`** երաժշտության ուղեկցությամբ քայլեր, վազքեր, ցատկեր, ծափեր, դոփյուններ, դաստակների պտույտներ, ձեռքերի խաչածն բարձրացում և իջեցում, միաժամանակ աջ ձեռքի բարձրացում վեր, ձախը` կողմ, աջը` առաջ, ձախը` վեր, իրանի թեքումները և դարձումները զուգակցել ձեռքերի շարժումների հետ: Աջ և ձախ ոտքերի հաջորդական ցուցադրում առաջ, հետ, կողմ:
7. **Կախեր և հենումներ.** հենումներ մարզանստարանի վրա: Կախեր մարզապատից և պարանից:
8. **Պարային վարժություններ** երաժշտության ուղեկցությամբ, ժողովրդական պարերի շարժումներ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Առանց գործիքների և դրանց կիրառմամբ մարմնամարզական վարժությունների կատարում:</p>	<p><b>1. Օրինաչափություն</b></p> <p>1) Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ` շարային կամ ակրոբատիկ վարժությունների կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ:</p> <p>2) Համապատասխան մոդելներն առաջին քայլն են` պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p><b>2. Համակարգ և մոդել</b></p> <p>1) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Մարմնամարզություն» սպորտաձևը) շատ ընդգրկուն և բարդ</p>

	<p>Է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:</p> <p>2) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p><b>3. Անհատ և հարաբերություններ</b></p> <p>1) Սովորողներն ուսումնասիրում են.</p> <p>ա. մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,</p> <p>բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

**Միջառարկայական կապեր**

- 1.Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2.Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր:
- 3.Մաթեմատիկա:** Հաշվողական կարողություններ:
- 4.Պար:Երաժշտություն:** Երաժշտառիթմական շարժումներ
- 5.Նախնական Զինվորական Պատրաստություն:** Շարային վարժաձևեր ու շարժումներ:
- 6.Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ**

S3, S4, S5, S6, S7, S8, S10, S11, S33, S34

**ԹԵՄԱ 4**

**ՇԱՐԺԱԽԱՂԵՐ /ՖԻԶԻԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԽԱՂԵՐ: «ԶՎԱՐՃԱԼԻ ՖՈՒՏԲՈԼ» ՏԱՐԻԵՐՈՎ ԽԱՂԵՐ/**



### Հիմնական նպատակը

1. Ուսուցանել տարբեր շարժախաղեր:
2. Ամրապնդել վազքի, ցատկերի, նետումների, գնդակը վարելու, փոխանցելու և ընդունելու ունակությունները:
3. Նպաստել համագործակցելու, շարժումները համաձայնեցնելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողունակությունների զարգացմանը:
4. Մշակել արագաշարժություն, ճարպկություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն:
5. Նպաստել ընկերասիրության, փոխօգնության հանդուրժականության դաստիարակմանը:
6. Գիտելիքներ հաղորդել ժամանակակից հայկական ֆուտբոլային թիմերի և խաղի կանոնների վերաբերյալ:
7. Ուսուցանել զվարճալի ֆուտբոլի տեխնիկան:

### Վերջնարդյունքներ

1. *Խաղա* շարժախաղեր վազքերի, ցատկերի և նետումների տեխնիկական տարրերի կիրառմամբ և ճիշտ կանոններով, համաձայնեցնելով շարժումները և *կողմնորոշվի* տարածության մեջ:
2. Տարբեր իրավիճակներում ճիշտ *կողմնորոշվի*, *ցուցաբերի* նպատակասլացություն և որոշումներ կայացնելու ունակություն:

### Բովանդակություն

1. **Վազքի ունակության ամրապնդման խաղեր.** «Կարտոֆիլի տնկում», «Երկու ճամբար», «Պայքար դրոշի համար»:
2. **Ցատկերի ունակության ամրապնդման խաղեր.** «Հեռացատկորդները», «Էստաֆետ ցատկապարաններով», «Էստաֆետ օղերով»:
3. **Նետումների ունակության ամրապնդման խաղեր.** «Որսորդներն ու սագերը», «Անվանիր շաբաթվա օրերը», «Ամենանշանառուն»:
4. **Գնդակը փոխանցելու և վարելու ունակության ամրապնդման խաղեր.** «Փոխանցիր կքանստիր», «Գնդակի փոխանցում շրջանում», «Արագ փոխանցիր», «Գնդակներով Էստաֆետ»:
5. **Կոորդինացիոն ընդունակությունների մշակմանը նպաստող խաղեր.** «Ծովն ալեկոծվում է», «Ով է ճարպիկը»:
6. **Ազգային խաղերի տարրերով խաղեր.** «Յոթ քար», «Ալիս–պալիս», «Ծիլտի», «Արդար–մեղավոր», «Թաթիկ–լաթիկ», «Չանգակի խաղ», «Ծափոցիկ», «Գառնուկն այգում է»:
7. **Զվարճալի ֆուտբոլի տարրերով խաղեր.** տեղեկություններ հաղորդել ժամանակակից հայկական ֆուտբոլային թիմերի մասին, խաղի կանոնների բացատրում: «Մակույկը ալիքների վրա», «Գնդակների հավաքում», «Շարժվող դարպասներ», «Փոխանցավազք շարասյուններում», «Երկկողմ խաղ 2\*2, 3\*3, 4\*4, 5\*5»:

Առաջարկվող գործունեության ձևեր

Խաչվող հասկացություններ

Առանց գործիքների և դրանց կիրառմամբ շարժախաղերի բովանդակությանը համապատասխան վարժությունների կատարում:

**1. Չարգացում**

1) Շարժախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, հավասար հնարավորությունները, մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները:

**2. Համակարգ և մոդել**

1) Ֆիզիկական կուլտուրա հասկացողությունը շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:

2) Շարժախաղերի համակարգը կարող է կազմված լինել, օրինակ՝ շարժումներից, վարժություններից, մարզաձևերին նմանակող խաղերից:

3) Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:

**3. Անհատ և հարաբերություններ**

1) Սովորողներն ուսումնասիրում են.  
ա. մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները, բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:

**Միջառարկայական կապեր**

- 1.Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2.Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր:
- 3.Մաթեմատիկա:** Հաշվողական կարողություններ:
- 4.Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ**

S3, S4, S5, S6, S7, S8, S10, S11, S33, S34

**ԹԵՄԱ 5.1**

**ԸՆՏՐՈՎԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ /ԼՈՂԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ: ԴԱՅՈՒԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ/**

**Հիմնական նպատակը**

1. Ուսուցանել մեկիենումային սահման տեխնիկան:
2. Ուսուցանել փոփոխական երկքայլ ընթացքի և «սանդղածև» վերելքի տեխնիկան:
3. Ձևավորել վայրէջքի հմտություններ:
4. Ուսուցանել «գութանաձև» արգելակման տեխնիկան:
5. Տեղեկություններ հաղորդել կոփման միջոցների և սկզբունքների վերաբերյալ:
6. Ուսուցանել բրաս լողաճի ձեռքերի աշխատանքի զուգակցումը շնչառության հետ:
7. Ձևավորել բրաս լողաճի ձեռքերի, ոտքերի աշխատանքի զուգակցման կարողունակությունները շնչառության հետ:
8. Ուսուցանել դարձումների տեխնիկան:
9. Ուսուցանել ոտքերը ցած ջրացատկի տեխնիկան:
10. Ուսուցանել բրաս լողաճի տեխնիկական տարրերի կիրառումը խաղերում և լողատարածություններ հաղթահարելիս:
11. Մշակել արագաշարժություն, դիմացկունություն, կոորդինացիա:
12. Ամրապնդել վազքի , ունակության ու կատարելագործման վարժություններ:
13. Ամրապնդել ցատկունակության վարժություններ:

**Վերջնարդյունքներ**

1. Սահուն կատարի.
  - 1) փոփոխական երկքայլ ընթացք,
  - 2) արգելակում «գութանաձև» և «հենումով»:
2. Հաղթահարի 300 մ տարածություն:
3. Բրաս լողաձևով ձեռքերի և ոտքերի աշխատանքը *զուգակցի* շնչառության հետ:
4. Բրաս լողաճով կատարի դարձումներ:
5. Բրաս լողաճով *հաղթահարի* 25մ տարածություն:
6. Գիտի ցատկունակության կատարման տեխնիկան, ինքնուրույն կողմնորոշվում է շարժման ընթացքում:

**Բովանդակություն**

1. **Դահուկային պատրաստության տեխնիկայի մեթոդները և միջոցները`** մեկիենումային սահում դահուկով աջ և ձախ ոտքերով: Փոփոխական երկքայլ ընթացք: Վերելք «սանդղածև» եղանակով: Արգելակում «գութանածև»: Հավասարաչափ արագությամբ տեղաշարժ դահուկներով մինչև 300 մ: Դահուկաընթացք արագացմամբ 40-50-ական մետր հատվածներում:
2. **Լողի ուսուցման տեխնիկայի մեթոդները և միջոցները`** ծանոթություն լողի միջոցով կոփման միջոցներին և սկզբունքներին: Բրաս լողաոճով ձեռքերի աշխատանքի և շնչառության զուգակցում: Բրաս լողավոճով ոտքերի, ձեռքերի և շնչառության համագործակցությունը: Դարձումներ բրաս լողավոճի եղանակով լողի ժամանակ: 25 մ լողատարածության կրկնակի լողանցումներ բրաս լողաոճով: Խաղեր ջրում. «Բուքսիր», «Կարթ», «Ճովառյուծներ», «Գորտ»:

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող հասկացություններ</b>
<p>Առանց գույքի և դանց կիրառմամբ դահուկային պատրաստության և լողի վարժությունների կատարում:</p>	<ol style="list-style-type: none"> <li><b>1. Օրինաչափություն</b> <ol style="list-style-type: none"> <li>1) Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ` սահող քայլքերում, դահուկավազքում կամ լողում թիավարումի և դարձումների ժամանակ, շարժումների հերթագայության մեջ:</li> <li>2) Համապատասխան մոդելներն առաջին քայլն են` պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</li> </ol> </li> <li><b>2. Համակարգ և մոդել</b> <ol style="list-style-type: none"> <li>1) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Դահուկային սպորտ» և «Լող» մարզածևերը), շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:</li> <li>2) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից և մարզածևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</li> </ol> </li> <li><b>3. Անհատ և հարաբերություններ</b> <ol style="list-style-type: none"> <li>1) Սովորողներն ուսումնասիրում են.</li> </ol> </li> </ol>

	<p>ա. մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,</p> <p>բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	--

**Միջառարկայական կապեր**

- 1.Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2.Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր:
- 3.Սաթեմատիկա:** Հաշվողական կարողություններ:
- 4.Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ**

S3, S4, S5, S6, S7, S8, S10, S11, S33, S34

**ԹԵՄԱ 5.2**

**ԸՆՏՐՈՎԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ. /խաղեր մագլցելով եվ սողանցելով: խաղեր նետելով եվ բռնելով/**

**Հիմնական նպատակը**

- 1. Հետաքրքրություն և սեր առաջացնել խաղերի նկատմամբ:
- 2. Ուսուցանել.
  - 1) մագլցելով և սողանցելով խաղերը,
  - 2) նետելով և բռնելով խաղերը:

**Վերջնարդյունքներ**

- 1. Արագ կողմնորոշվի իրավիճակում:
- 2. Ուշադրությունը կենտրոնացնի անհրաժեշտ առարկայի կամ երևույթի վրա:
- 3. Կոնկրետ իրավիճակում կայացնի արդյունավետ որոշում:
- 4. Համագործակցի թիմակիցների հետ:
- 5. Ցուցաբերի նախաձեռնություն, ճկունություն, ճարակություն:

**Բովանդակություն**

**1. Խաղեր մագլցելով և սողանցելով.**

1) Թռչունների չուն:

2) Կապիկների որսը:

**2. Խաղեր նետելով և բռնելով.**

1) Չնդակի դպրոց:

2) Ում անվանեցին, նա բռնում է գնդակը:

3) Բռնոցի գնդակով:

4) Որսորդը և գազանները:

5) Ում անունը տամ, վերցնում է գնդակը:

6) Թռչունները և արծիվը:

7) Հասիր թմբուկին և խփիր:

8) Ազատիր ընկերոջը:

9) Արագ վերցրու գնդակը:

10) Արագ զբաղեցրու ազատ տեղը:

11) Հավեր:

12) Խփիր կենտրոնում կանգնածին:

13) Էստաֆետա դրոշակներով:

14) Հովիվը և գայլը:

15) Ում շարքը շուտ կշարվի:

16) Փոխանցիր գնդակը:

17) Նստել-պառկել:

18) Գցիր նպատակին:

19) Խփիր զանգը:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

Առանց գործիքների և դրանց կիրառմամբ շարժախաղերի բովանդակությանը համապատասխան վարժությունների կատարում:

**Խաչվող հասկացություններ**

**1. Օրինաչափություն**

1) Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ շարային կամ ակրորատիկ

	<p>վարժությունների կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ:</p> <p>2) Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p><b>2. Համակարգ և մոդել</b></p> <p>1) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Մարմնամարզություն» սպորտաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:</p> <p>2) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p><b>3. Անհատ և հարաբերություններ</b></p> <p>1) Սովորողներն ուսումնասիրում են.</p> <p>ա. մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,</p> <p>բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	--

**Միջառարկայական կապեր**

- 1. **Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2. **Մաթեմատիկա:** Թվագիտություն: Հաշվողական կարողություններ:

<p>3. <b>Ֆիզիկա:</b> Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:</p> <p>4. <b>Կենսաբանություն:</b> Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակար</p> <p>5. <b>Նախնական Չինվորական Պատրաստություն:</b> Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ:</p>
<b>Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ</b>
S9, S27, S31, S33, S34

**6-րդ ԴԱՍԱՐԱՆ**

**ԹԵՄԱ 1**

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**Հիմնական նպատակը**

1. Հաղորդել գիտելիքներ առողջ ապրելակերպի վերաբերյալ:
2. Ծանոթացնել ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկման ձևերին:
3. Ընդլայնել ժամանակակից օլիմպիական խաղերին հայ մարզիկների մասնակցության մասին դպրոցականների գիտելիքները:
4. Ձևավորել պատկերացումներ սպորտային էթիկայի վերաբերյալ:

**Վերջնարդյունքներ**

1. *Գիտի* դպրոցականի կյանքում առողջ ապրելակերպի և ճիշտ կեցվածքի պահպանման կարևորության մասին:
2. *Ծանոթ է* ժամանակակից օլիմպիական խաղերում հայ մարզիկների մասնակցությանը:
3. *Պահպանի* սպորտային էթիկան, *տիրապետի* ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկումը:

**Բովանդակություն**

1. Առողջ ապրելակերպը դպրոցականի կյանքում և ճիշտ կեցվածքի պահպանման հմտության ձևավորումը:
2. Հայ մարզիկների մասնակցությունը ժամանակակից օլիմպիական խաղերին:
3. Սպորտային էթիկա:
4. Ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկում:

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող հասկացություններ</b>
---------------------------------------	--------------------------------



1. Օգտվելով համացանցից և գրականությունից՝ ինքնուրույն ուսումնասիրում և ներկայացնում են դպրոցականների կյանքում առողջ ապրելակերպի և ճիշտ կեցվածքի պահպանման հմտության ձևավորումը, հայ մարզիկների մասնակցությունը ժամանակակից օլիմպիական խաղերին և սպորտային էթիկան:
2. Դասարանում խճանկարի միջոցով կազմում են Ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկման ձևերի իրենց տարբերկը:

- 4. Ժամանակ և տարածություն**
- 2) Սովորողներն ուսումնասիրում են մարզական ոլորտի տարբեր մարդկանց պատմությունները, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով մարզումների դերը տարբեր ժամանակների նշանավոր մարդկանց կյանքում:
- 5. Անհատական և մշակութային արժեհամակարգ**
- 3) Ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ:
  - 4) Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:
- 6. Չարգացում**
- Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):

**Միջառարկայական կապեր**

1. **Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
2. **Հայոց պատմություն:** Համաշխարհային պատմություն: Պատմական ակնարկներ:
3. **Ինֆորմատիկա:** Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր:
4. **Ռուսերեն (այլ օտար լեզու):** Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ2, Հ4, Հ5, Հ13, Հ15, Հ17, Հ22, Հ25, Հ26, Հ27, Հ31, Հ33, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50

**ԹԵՄԱ 2**

**ԱԹԼԵՏԻԿԱԿԱՆ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ /ՎԱՉՔԵՐ: ՑԱՏԿԵՐ: ՆԵՏՈՒՄՆԵՐ /**

<b>Հիմնական նպատակը</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Ծանոթացնել ցածր մեկնարկային դիրքից վազքի կատարման տեխնիկային:</li> <li>2. Ուսուցանել կարճ և միջին վազքի, Եստաֆետային վազքի, «ոտքերը կծկված» եղանակով հեռացատկի, «քայլանցում» եղանակով բարձրացատկի կատարման տեխնիկան:</li> <li>3. Ամրապնդել գնդակների նետման տեխնիկական:</li> <li>4. Մշակել արագաշարժության, դիմացկայունության, ցատկունակության, ուժի շարժողական կարողունակություններ:</li> <li>5. Դաստիարակել բարոյականային հատկանիշներ, համարձակություն, վճռականություն, նպատակասլացություն:</li> </ol>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Գիտի</i> ցածր մեկնարկային դիրքից վազքի, կարճ և միջին վազքի, Եստաֆետային վազքի, «ոտքերը կծկված» եղանակով հեռացատկի, «քայլանցում» եղանակով բարձրացատկի կատարման տեխնիկան:</li> <li>2. <i>Տիրապետի</i> գնդակների նետման տեխնիկային:</li> <li>3. <i>Ունի</i> արագաշարժության, դիմացկայունության, ցատկունակության, ուժի շարժողական կարողունակությունների բավարար մակարդակ:</li> <li>4. <i>Դրսևորի</i> բարոյականային հատկանիշներ, համարձակություն, վճռականություն, նպատակասլացություն:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <b>Վազքեր:</b> Տեղեկություններ վազքի փուլերի, «մեկնարկի», «մեկնարկային թափի», «տարածությունում վազքի» և «վերջնարկի» վերաբերյալ: Վազք արագացումով մինչև 40 մ: Վազք առավելագույն արագությամբ բարձր մեկնարկից 60 մ: Եստաֆետային փոխանցումավազք &lt;&lt;հանդիպակաց&gt;&gt; եղանակով 10-20 մ: Վազք հավասարաչափ և փոփոխական տեմպով 8 - 10 րոպե:</li> <li>2. <b>Ցատկեր:</b> Ծանոթություն հեռացատկի տեխնիկայի փուլերին (ռիթմիկ թափավազք, հրում, ճախրում, վայրեջք) և մրցման կանոններին: Հեռացատկ «ոտքերը կծկած» եղանակով: Բարձրացատկ 3-5 վազքաքայլով 70 սմ (տղաներ) և 50 սմ (աղջիկներ) ձողի հաղթահարումով:</li> <li>3. <b>Նետումներ:</b> Տեխնիկայի տարրերի ելման դրություն, նետման դրություն «ձգված աղեղ», գնդակի բացթողման իմացություն և կատարում: Թենիսի գնդակի նետում 10-12 սմ հեռավորությունից հորիզոնական և ուղղահայաց նպատակին:</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող հասկացություններ</b>
Առանց գործիքների և դրանց կիրառմամբ աթլետիկական վարժությունների կատարում:	<b>4. Օրինաչափություն</b> 3) Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և

	<p>հարաբերություններում, օրինակ՝ քայլքի, վազքի կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ:</p> <p>4) Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p><b>5. Համակարգ և մոդել</b></p> <p>3) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Աթլետիկա» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:</p> <p>4) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p><b>6. Անհատ և հարաբերություններ</b></p> <p>2) Սովորողներն ուսումնասիրում են.</p> <p>ա. մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,</p> <p>բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	--

**Միջառարկայական կապեր**

- 1. Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2. Մաթեմատիկա:** Թվագիտություն: Հաշվողական կարողություններ:

<p><b>3.Ֆիզիկա:</b> Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:</p> <p><b>4.Կենսաբանություն:</b> Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր:</p> <p><b>5.Նախնական Ձինվորական Պատրաստություն:</b> Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ:</p>
<p><b>Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</b></p>
<p>Հ2, Հ4, Հ5, Հ13, Հ15, Հ17, Հ22, Հ25, Հ26, Հ27, Հ31, Հ33, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50</p>
<p><b>ԹԵՄԱ 3</b></p>
<p><b>ՄԱՐՄԱՄԱՐՉԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿԱԽԵՐ ԵՎ ՀԵՆՈՒՄՆԵՐ: ՀԵՆԱՑԱՏԿԵՐ: ԱԿՐՈՒՄՏԻԿ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՄԱԳԼՏՈՒՄՆԵՐ: ՌԻԹՄԻԿ - ՄԱՐՄԱՄԱՐՉԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ/</b></p>
<p><b>Հիմնական նպատակը</b></p>
<p>1.Ուսուցանել վերադասավորումների, ընդհանուր զարգացնող վարժությունների, կախերի և հենումների, հենացատկերի, ակրոբատիկական վարժությունների և ռիթմիկ մարմնամարզական վարժությունների տեխնիկան:</p> <p>2.Մշակել շարժողական կարողունակություններ՝ ճկունություն, կոորդինացիա, ուժ, ցատկունակություն, երաժշտառիթմային շարժումներ:</p> <p>3.Դաստիարակել կարգապահություն, կազմակերպվածություն, համարձակություն, վճռականություն, կամքի ուժ, ինքնուրույնություն:</p>
<p><b>Վերջնարդյունքներ</b></p>
<p>1. Ինքնուրույն կատարի վերադասավորումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ, կախեր և հենումներ, հենացատկեր, ակրոբատիկական և ռիթմիկ մարմնամարզական վարժություններ:</p> <p>2. <i>Տիրապետի</i> շարժողական կարողունակությունների՝ ճկունություն, կոորդինացիա, ուժ, ցատկունակություն, երաժշտառիթմային շարժումներ:</p> <p>3. <i>Դրսևորի</i> կարգապահություն, կազմակերպվածություն, համարձակություն, վճռականություն, կամքի ուժ, ինքնուրույնություն:</p>
<p><b>Բովանդակություն</b></p>
<p>1. <b>Շարային վարժություններ:</b> Շարային քայլք: Վերադասավորումներ միատողան շարքից երկտողան շարքի, միատողան (երկտողան) շարքից շրջանի, միաշարասյունից՝ երկշարասյուն (եռաշարասյուն, քառաշարասյուն) շարքի:</p> <p>2. <b>Ընդհանուր զարգացնող վարժություններ:</b> Ընդհանուր զարգացնող վարժություններ առանց առարկաների: Ընդհանուր զարգացնող վարժություններ զույգերով: Ընդհանուր զարգացնող վարժություններ մեծ և լցված գնդակներով, կցագնդերով,</p>

մարզափայտերով (տղաներ): Վարժություններ օդերով, զույգերով, մեծ գնդակներով, մարզափայտերով (աղջիկներ): Կեցվածքի ձևավորման վարժություններ:

3. **Կախեր և հենումներ:** Տղաներ՝ մեկ ոտքի թափով և մյուսի հրումով վերելք՝ շրջվելով ընդունելով հենում դրությունը: Ետ թափով վարցատկ: Ուռքերը զատած, ազդրին նստած դրությունից վարցատկ դարձումով: Աղջիկներ՝ ուստյունով ընդունել ցածր ձողին հենում դրությունը: Վարցատկ դարձումով: Թափահարումներ ծալվելով:
4. **Հենացատկեր:** 100-110 սմ բարձրությամբ, լայնակի տեղադրված այծի վրայով հենացատկ՝ «ուռքերը զատած» եղանակով:
5. **Ակրոբատիկական վարժություններ:** Երկու գլուխկոնծի միաձուլվելով: Կանգնած դրությունից «Կամուրջ» վարժակցի օգնությամբ:
6. **Մագլցման վարժություններ:** Պարանամագլցում. տղաները՝ մագլցում «երկու հանգով», աղջիկները՝ «երեք հանգով»:
7. **Ռիթմիկ մարմնամարզական վարժություններ:** Կատարել ուսին ծալած ձեռքերի բարձրացում և իջեցում, ծալումներ և բացումներ: Դաստակի սեղմումներ՝ ձեռքերը առաջ, կողմ, վեր: Ափերի նախաբազուկների տարբեր դիրքեր, ծափեր, կողմեր տանել: Ուռքերը զատած դրությունից ձեռքերը գոտկատեղին, դարձումներ աջ և ձախ: Ձեռքերը առաջ տանել տարբեր կողմերի շրջադարձներով: Ուռքերի բարձրացում և իջեցում գլխի միաժամանակյա հետ խոնարհումով: Կքանիստ, կանգնել, բարձրանալ ոտնաթաթերի վրա: Յուրացված շարժումների համակցումներով համալիրներ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Առանց գործիքների և դրանց կիրառմամբ մարմնամարզական վարժությունների կատարում:</p>	<p><b>4. Օրինաչափություն</b></p> <p>3) Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ շարային կամ ակրոբատիկ վարժությունների կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ:</p> <p>4) Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p><b>5. Համակարգ և մոդել</b></p> <p>3) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Մարմնամարզություն» սպորտաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:</p>

	<p>4) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p><b>6. Անհատ և հարաբերություններ</b></p> <p>2) Սովորողներն ուսումնասիրում են.</p> <p>ա. մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,</p> <p>բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	--

**Միջառարկայական կապեր**

- 1.Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2.Մաթեմատիկա:** Թվագիտություն: Հաշվողական կարողություններ:
- 3.Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:
- 4.Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ2, Հ4, Հ5, Հ13, Հ15, Հ17, Հ22, Հ25, Հ26, Հ27, Հ31, Հ33, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50

**ԹԵՄԱ 4.1**

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐ / ԲԱՍԿԵՏԲՈԼ. ՄԱՐԶԱԽԱՂԻ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ԽՄԲԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:  
 ԲԱՍԿԵՏԲՈԼԻՍՏԻ ԿԵՑՎԱԾՔ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ: ԳՆԴԱԿԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ: ԳՆԴԱԿԻ ՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՏՈՒՄ/**

**Հիմնական նպատակը**

- 1. Հետաքրքրություն առաջացնել բասկետբոլ մարզաձևի նկատմամբ:

2. Ուսուցանել բասկետբոլիստի կեցվածքով տեղաշարժերի, շարժման ընթացքում գնդակի ընդունման, վարման, փոխանցման և նետման տեխնիկային:
3. Ծանոթացնել պաշտպանողական, հարձակողական և անհատական մարտավարական գործողություններին:
4. Ուսուցանել գնդակի խլման և հետ մղման տեխնիկան:
5. Ուսուցանել մարտավարական առաջադրանքներով (2 x 1, 3 x 1, 3 x 2, 3 x 3) խաղ:
6. Մշակել շարժողական կարողունակություններ՝ արագաշարժություն, ճարպկություն, դիմացկունություն, կորդինացիա:
7. Դաստիարակել համագործակցության, նախաձեռնության հմտություններ:

### **Վերջնարդյունքներ**

1. *Տիրապետի* բասկետբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, շարժման ընթացքում գնդակի ընդունման, վարման, փոխանցման և նետման տեխնիկային:
2. *Ծանոթ է* պաշտպանողական, հարձակողական և անհատական տակտիկական գործողություններին:
3. *Տիրապետի* գնդակի խլման և հետ մղման տեխնիկային:
4. *Ունի* շարժողական կարողունակություններ. արագաշարժություն, ճարպկություն, դիմացկունություն, շարժումների կորդինացիայի բավարար մակարդակ:
5. *Դրսևորի* համագործակցության, նախաձեռնության հմտություններ:

### **Բովանդակություն**

1. **Բասկետբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը:** Կեցվածքով դարձումներ, արագացումներ և կանգառներ:
2. **Գնդակի ընդունում և փոխանցում:** Գնդակի ընդունում և փոխանցում շարժման ընթացքում՝ զույգերով և եռյակներով: Գնդակի վարում՝ ինքնուրույն որոշելով կանգառը և փոխանցման ուղղությունը:
3. **Գնդակի վարում:** Գնդակի վարում արագության և շարժման ուղղության փոփոխությամբ: Գնդակի վարում աջ և ձախ ձեռքով՝ մրցակցի դիմադրությամբ:
4. **Գնդակի նետում:** Գնդակի նետում օդակին կանգնած դիրքից և շարժման ընթացքում: Գնդակի նետում օդակին մրցակցի դիմադրությամբ:
5. **Ազատ հարձակման տակտիկա:** Ծանոթություն պաշտպանության և հարձակման անհատական տակտիկական գործողություններին: Ազատ հարձակման տակտիկա՝ դիքային հարձակում առանց խաղացողների դիրքի փոփոխության: Հարձակում արագ ճեղքման միջոցով ( 1 x 0): Հարձակում երկու խաղացողների փոխգործողությամբ:
6. **Անհատական պաշտպանություն:** Գնդակի խլում և հետմղում, անհատական և թիմային պաշտպանություն: Խաղի տիրապետում: Պարզեցված խաղ՝ մինի բասկետբոլի կանոններով: Խաղեր և խաղային առաջադրանքներ (2x1, 3x1, 3x2, 3x3):

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող հասկացություններ**

Առանց գույքի և դրանց կիրառմամբ բասկետբոլ մարզախաղի վարժությունների կատարում:

### **1. Անհատական և մշակութային արժեհամակարգ**

- 1) Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացմունքներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ:
- 2) Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:

### **2. Չարգացում**

- 1) Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):

### **3. Համակարգ և մոդել**

- 1) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Բասկետբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:
- 2) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:

### **4. Անհատ և հարաբերություններ**

- 1) Սովորողներն ուսումնասիրում են.  
ա. մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր,



	<p>սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

**Միջառարկայական կապեր**

- 1. Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2. Մաթեմատիկա:** Թվագիտություն: Հաշվողական կարողություններ:
- 3. Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:
- 4. Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր
- 5. Ռուսերեն (այլ օտար լեզու):** Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ2, Հ4, Հ5, Հ13, Հ15, Հ17, Հ22, Հ25, Հ26, Հ27, Հ31, Հ33, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50

**ԹԵՄԱ 4.2**

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐ /ԿՈՆԵՅՐՈՆ ՄԱՐԶԱԽԱՂԻ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ԽՄԲԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿՈՆԵՅՐՈՆԻՍՏԻ ԿԵՑՎԱԾՔ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ: ԳՆԴԱԿԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ: ՍԿԶԲՆԱՀԱՐՎԱԾ, ՈՒՂԻՂ ՀԱՐԶԱԿՈՂԱԿԱՆ ՀԱՐՎԱԾ ԵՎ ՀԱՐԶԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/**

**Հիմնական նպատակը**

- 1. Հետաքրքրություն առաջացնել վոլեյբոլ մարզաձևի նկատմամբ:
- 2. Ուսուցանել վոլեյբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, սկզբնահարվածի և ուղիղ հարձակողական հարվածի տեխնիկան:
- 3. Ուսուցանել ազատ և դիրքային հարձակման մարտավարական գործողությունները:
- 4. Ուսուցանել փոքրաթիվ 3 x 3, 4 x 4 քանակով, փոքրացված խաղադաշտով խաղալ վոլեյբոլ:
- 5. Մշակել շարժողական կարողունակություններ. արագաշարժություն, ռեակցիա, ցատկունակություն, կորդինացիա:
- 6. Դաստիարակել կարգապահության, համագործակցության, փոխօգնության, պատասխանատվության հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

- 1. *Տիրապետի* վոլեյբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, սկզբնահարվածի և ուղիղ

- հարձակողական հարվածի տեխնիկային:
- 2. *Ծանոթ* Է ազատ և դիրքային հարձակման մարտավարական գործողություններին:
- 3. *Ունի* համագործակցության, նախաձեռնության, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողունակություններ:
- 4. *Ցուցաբերի* արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ:

**Բովանդակություն**

- 1. **Վոլեյբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը:** Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժվել կից քայլերով դեպի աջ, ձախ, առաջ, ետ, դեմքով և մեջքով առաջ: Արագ պոկումներ տեղից տարբեր ուղղություններով և կանգառներ:
- 2. **Գնդակի փոխանցում և ընդունում:** Գնդակի փոխանցում գլխավերևում: 2-3 մ հեռավորության վրա գնդակի ընդունում երկու ձեռքով ներքևից:
- 3. **Սկզբնահարված և ուղիղ հարձակողական հարված:** Ներքևից ուղիղ սկզբնահարված ցանցից, հեռավորության վրա: Խաղընկերոջ վեր նետած գնդակին ուղիղ հարձակողական հարված: Ցուրացված տարրերի համակցում՝ գնդակի ընդունում, փոխանցում և հարձակողական հարված: Ազատ հարձակման տակտիկա:
- 4. **Հարձակողական տակտիկական գործողություններ:** Դիրքային հարձակում՝ առանց փոխելու խաղացողների դիրքը:
- 5. **Խաղի տիրապետում:** Երկկողմ խաղ մինի վոլեյբոլի կանոններով: Երկկողմ խաղ փոքրաթիվ խաղացողներով (3 x 3, 4 x 4) և փոքր խաղադաշտում:

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող հասկացություններ</b>
<p>Առանց գույքի և դրանց կիրառմամբ վոլեյբոլ մարզախաղի վարժությունների կատարում:</p>	<p><b>1. Անհատական և մշակութային արժեհամակարգ</b></p> <p>1) Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ:</p> <p>2) Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:</p> <p><b>2. Չարգացում</b></p> <p>1) Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-</p>

	<p>հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p> <p><b>3. Համակարգ և մոդել</b></p> <p>1) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես նաև «Վոլեյբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:</p> <p>2) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p><b>4. Անհատ և հարաբերություններ</b></p> <p>1) Սովորողներն ուսումնասիրում են.</p> <p>ա. մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,</p> <p>բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

**Միջառարկայական կապեր**

- 1.Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2.Մաթեմատիկա:** Թվագիտություն: Հաշվողական կարողություններ:
- 3.Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:

**4.Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր  
**5.Ռուսերեն (այլ օտար լեզու):** Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**  
 Հ2, Հ4, Հ5, Հ13, Հ15, Հ17, Հ22, Հ25, Հ26, Հ27, Հ31, Հ33, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50

**ԹԵՄԱ 4.3**

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐ /ՀԱՆԴՐՈՒ ՄԱՐԶԱԽԱՂԻ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ԽՄԲԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:  
 ՀԱՆԴՐՈՒԽՍՏԻ ԿԵՑՎԱԾՔ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ: ԳՆԴԱԿԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ: ԳՆԴԱԿԻ ՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՏՈՒՄ  
 ԴԱՐԴԱՍԻՆ: ԱԶԱՏ ՀԱՐԶԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ/**

**Հիմնական նպատակը**

1. Ուսուցանել հանդբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, վարման, կանգառների, փոխանցումների, գնդակի հանման, իլման, ուղիղ ձեռքով նետման տեխնիկան:
2. Ծանոթացնել ազատ հարձակողական մարտավարական գործողություններին:
3. Ուսուցանել պարզեցված կանոններով և մարտավարական 2 x 1, 3 x 2, 3 x 3 առաջադրանքներով խաղալ հանդբոլ:
4. Մշակել շարժողական կարողունակություններ. արագաշարժություն, դիմացկունություն, կոորդինացիա, ճարպկություն, ցատկունակություն:
5. Դաստիարակել համագործակցություն, փոխօգնություն, հանդուրժողականություն, ինքնատիրապետման, նպատակասլացության հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. *Տիրապետի* հանդբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, վարման, կանգառների, փոխանցումների, գնդակի հանման, իլման, ուղիղ ձեռքով նետման տեխնիկային:
2. *Ծանոթ է* ազատ հարձակողական մարտավարական գործողություններին:
3. *Ունի* շարժողական կարողունակություններ. արագաշարժության, դիմացկունության, կոորդինացիայի, ճարպկության, ցատկունակության բավարար մակարդակ:
4. *Դրսևորի* համագործակցություն, փոխօգնություն, հանդուրժողականություն, ինքնատիրապետման, նպատակասլացության հմտություններ:

**Բովանդակություն**

1. **Հանդբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը:** Հանդբոլիստի կեցվածքով տեղաշարժերը կից քայլերով, մեջքով առաջ կողմ, դեմքով առաջ կողմ: Կանգառներ երկու քայլով և ցատկով, դարձումներ գնդակով: Տեխնիկայի տարրերի համակցումներ՝ տեղաշարժեր, հանդբոլիստի կեցվածքով կանգառ, դարձումներ – արագացումներ:
2. **Գնդակի ընդունում և փոխանցում:** Գնդակի ընդունում և փոխանցում զույգերով, եռյակներով, քառակուսու մեջ, շրջանում: Մեկ ձեռքով ուսի վրայից:
3. **Գնդակի վարում:** Գնդակի վարում ցածր, միջին և բարձր կեցվածքով, շարժման ուղղությունը փոփոխելով: Գնդակի դուրս մղում և խլում խաղընկերոջից:
4. **Գնդակի նետում դարպասին:** Գնդակի նետում ուղիղ ձեռքով վերևից, ծաված ձեռքով վերևից և կողքից: Գնդակի նետում դարպասի նշադրված ուղղությամբ: Շրջափակում՝ համագործակցելով խաղընկերների հետ:
5. **Ազատ հարձակողական տակտիկա:** Դիրքային հարձակում՝ առանց փոխելու խաղացողների դիրքը: Արագ հարձակում կենտրոնով: Արագ հարձակում երկու խաղացողների փոխգործողությամբ:
6. **Խաղի տիրապետում:** Պարզեցված խաղ հանդբոլի կանոններով: Խաղային առաջադրանքներ՝ 2 x 1, 3 x 2, 3 x 3 դիմաց:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Առանց գույքի և դրանց կիրառմամբ հանդբոլ մարզախաղի վարժությունների կատարում:</p>	<p><b>1. Անհատական և մշակութային արժեհամակարգ</b></p> <p>1) Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ:</p> <p>2) Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:</p> <p><b>2. Չարգացում</b></p> <p>1) Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p> <p><b>3. Համակարգ և մոդել</b></p>

	<p>1) Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Հանդբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս:</p> <p>2) Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p><b>4. Անհատ և հարաբերություններ</b></p> <p>1) Սովորողներն ուսումնասիրում են.</p> <p>ա. մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները,</p> <p>բ. մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	--

**Միջառարկայական կապեր**

- 1.Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:
- 2.Մաթեմատիկա:** Թվագիտություն: Հաշվողական կարողություններ:
- 3.Ֆիզիկա:** Կենսամեխանիկայի օրենքներ, շարժումների դինամիկա, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքներ:
- 4.Կենսաբանություն:** Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգեր
- 5.Ռուսերեն (այլ օտար լեզու):** Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ2, Հ4, Հ5, Հ13, Հ15, Հ17, Հ22, Հ25, Հ26, Հ27, Հ31, Հ33, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50

**ԹԵՄԱ 4.4**

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐ /ՖՈՒՏԲՈԼԻ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ԽՄԲԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ: ԳՆԴԱԿԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԵԽՆԻԿԱ: ԴԱՐՊԱՍԱՊԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԸ: ԽԱՂԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ/**

**Հիմնական նպատակը**

1. Ծանոթացնել ֆուտբոլ մարզաձևով զբաղվելու տարիքային ժամանակաշրջանին և սկզբնական ընտրությանը:
2. Ձևավորել պատկերացումներ դեռահասների ֆուտբոլի բարերար ազդեցության, տնային առաջադրանքների և առաջադիմության հաշվառման վերաբերյալ:
3. Ուսուցանել ֆուտբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, անշարժ և գլորվող գնդակների հարվածների, կասեցումների, գնդակի վարման տեխնիկային:
4. Ուսուցանել դարպասապահի տեղաշարժերի, գնդակի որսման տեխնիկային:
5. Երկկողմանի խաղ՝ 2 x 2, 3 x 3, 4 x 4, 5 x 5, 6 x 6, 7 x 7 դեմ:
6. Մշակել շարժողական կարողունակություններ. արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ցատկունակություն:
7. Դաստիարակել փոխօգնության, կարգապահության, համարձակության, համագործակցության հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. *Գիտի* ֆուտբոլ մարզաձևով զբաղվելու տարիքային ժամանակաշրջանը և սկզբնական ընտրության կարգը:
2. *Կարևորի* դեռահասների ֆուտբոլի բարերար ազդեցությունը:
3. *Տիրապետի* ֆուտբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, անշարժ և գլորվող գնդակների հարվածների, կասեցումների, գնդակի վարման տեխնիկային:
4. *Գիտի* դարպասապահի տեղաշարժերն ու գնդակի որսման տեխնիկան:
